[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
2	Հուլիս	2018 թ.		Բ	8511510267
[4] Մատուցման ամսաթիվը				Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
2	Հուլիս	2018 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
	2 Հուլիս, 2018 թ.	Բ8511510267

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի	
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 0 1 2 4 1 0 5
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[10] Անվանումը	«ՖԻՆԼՈՌԻ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ԱՊԸ)
[11] Բանկային տվյալները	ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ N 2474602078940000
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի		
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3	
[15] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ	
[16] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,	N 900011000834
[17] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5	
[18] Լրացուցիչ տվյալներ		
[19] Ում միջոցով	Անուն, ազգանուն	
	Լիազորագիր — Համար	
	Լիազորագիր — Ամսաթիվ	

[20] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N N Հ/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ժամանակաշրջանը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1.	գրավոր թարգմանություն հայերենից դրսերեն թիվ 11132415 քրեական գործի 5 հատոր	նիշ	4058018	1.39		5640645.02
Ընդամենը						5640645.02

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ SHAHINYAN VARDUHI 7803710425

(Ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

02/07/2018 11:06:50

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
Թարգմանիչ ներգրավելու մասին

16.փետրվարի 2017թ. ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ՀԿԳ քննիչ, արդարադատության կապիտան Ա.Զ.Աբրահամյանս վերանայելով վարույթումս քննվող թիվ 11132415 քրեական գործի նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

ՀՀ քննչական կոմիտեի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում քննվող թիվ 11132415 քրեական գործի նախաքննության ընթացքում 27.11.2015թ.-ին որոշում է կայացվել Տիգրան Աշոտի Հարությունյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, այն հանրորեն վտանգավոր արարքի համար, որ նա խարդախությամբ ուրիշի գույքի առանձնապես խոշոր չափերի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, չարաշահելով իր ծանոթ Արման Ռաֆայելի Երիցյանի վստահությունը, 2015թ. ապրիլի 27-ին ժամը 16:00-ի սահմաններում Երևան քաղաքի Արշակունյաց պողոտայի 51-րդ հասցեում գտնվող նոտարական գրասենյակում Արման Երիցյանի հոր՝ Ռաֆայել Համբարձումի Երիցյանին սեփականության իրավունքով պատկանող «Մերսեդես-Բենց» մակնիշի 34 CS 365 համարանիշի ավտոմեքենան 3.840.000 ՀՀ դրամ գումարով գնելու պատրվակով, Ռ.Երիցյանից լիազորագրով ստացել է ավտոմեքենան վաճառելու իրավունք և հափշտակել այն:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ Տիգրան Հարությունյանը խարդախությամբ հափշտակված «Մերսեդես-Բենց» մակնիշի 34 CS 365 հաշվառման համարանիշի ավտոմեքենան վաճառել է Լևոն Հմայլյանին և այդ գործընթացին ներկա է եղել նաև Տիգրան Հրությունյանի ընկեր Ալբերտ Հարությունյանը:

27.06.2015թ. ոստիկանության Շենգավիթի բաժնում հաղորդում է տվել Լիլիթ Սահակյանն այն մասին, որ Տիգրան Հարությունյանն իր վստահությունը չարաշահելու եղանակով 2014թ. սեպտեմբերի 1-ին «ՎՏԲ Հայաստան» բանկի Շենգավիթ մասնաճյուղում նախկինում գրավադրված ոսկյա զարդերը անվանափոխել է իր անվամբ՝ խոստանալով կատարել համապատասխան վարկային վճարումները, միաժամանակ անվանափոխություն կատարելու ժամանակ իր անվամբ ոսկյա զարդերի գրավի գումարի չափից 40 տոկոս ավել՝ 530.000 ՀՀ դրամ գումար նույն բանկից վարկ է վերցրել խոստանալով կատարել վճարումները: Վարկային պարտավորությունները չկատարելու համար բանկը աճուրդով վաճառել է ոսկյա իրերը, իսկ իր անվամբ վերցրած 530.000 ՀՀ դրամի դիմաց, ինքը 2015թ. հունվար ամսից սկսած ամսական վճարում է 15.000 ՀՀ դրամ որպես մայր գումարի տոկոս, քանի որ Տ.Հարությունյանը ոչ մի վճարում չի կատարել՝ այդ կերպ Լ.Սահակյանին պատճառելով գույքային վնաս:

Դեպքի առթիվ 01.07.2015թ. Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 11142815 քրեական գործը:

Նախաքննությն ընթացքում պարզվել է, որ Լիլիթ Սահակյանը Տիգրան Հարությունյանի հետ ծանոթացել է իր գործընկերուհի Ռեբեկա Համբարձումյանի և վերջինիս ընկերոջ Արտակ Սիմոնյանի միջոցով և վերջիններիս խնդրանքով է համաձայնվել որպեսզի վարկը իր անվամբ ձևակերպվի:

27.11.2015թ. թիվ 11142815 քրեական գործով որոշում է կայացվել Տիգրան Աշոտի Հարությունյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, այն բանի համար, որ նա որ նա 2014թ. սեպտեմբերի 1-ին «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի Շենգավիթի մասնաճյուղում, Լիլիթ Սահակյանի

վստահությունը չարաշահելով՝ խոստանալով ժամանակին կատարել բոլոր վարկային պարտավորությունները, նախկինում նշված բանկում գրավադրված ոսկյա զարդերը Լ.Սահակյանի համաձայնությամբ անվանափոխել են նրա անվամբ, սակայն վարկային պարտավորությունները չի կատարել, որից հետո նույն ժամանակահատվածում բանկում գործող ակցիայի շրջանակներում անվանափոխած ոսկյա զարդերի գումարի 40 տոկոսի չափով ձևակերպել է վարկ Լ.Սահակյանի անվամբ, ստացել 530.000 ՀՀ դրամ գումար և խաբեությամբ հափշտակել այն՝ Լ.Սահակյանին պատճառելով խոշոր չափերի 530.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

27.11.2015թ. 11142815 և 11132415 քրեական գործերը միացվել են մեկ վարույթում և շարունակվել է նախաքննությունը 11132415 համարի տակ:

30.11.2015թ. քրեական գործն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչություն՝ նախաքննությունը շարունակելու նպատակով: 01.12.2015թ քրեական գործը ընդունվել է վարույթ:

2015թ. ապրիլի 21-ին Գագիկ Եգորի Վարդանյանը ոստիկանության Արաբկիրի բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ 2014 թվականի ապրիլի 21-ին՝ ժամը 16:00-ի սահմաններում, Կոմիտաս պողոտայի 16/1 հասցեում գտնվող «Առէկսիմբանկ» ՓԲ ընկերության Կոմիտաս մասնաճյուղի իր աշխատասենյակում Քրիստինե Ալավերդյանը ներկայացրել է ոսկեգույն թևնոց՝ այն գրավ դնելու և խարդախությամբ դրա դիմաց տրվող վարկին տիրանալու նպատակով, սակայն իր կողմից թևնոցը ստուգվել և պարզվել է, որ այն ոսկուց չէ, այլ մետաղից է:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ Տիգրան Աշոտի Հարությունյանը և Մարինե Գեղամի Մկրտչյանը նախնական համաձայնությամբ խարդախություն կատարելու դիտավորությամբ Քրիստինե Հայկի Ալավերդյանի միջոցով Կոմիտաս պողոտայի 16/1 հասցեում գտնվող «Առէկսիմբանկ» ՓԲ ընկերության Կոմիտաս մասնաճյուղում 2015թ. ապրիլի 21-ին խաբեությամբ փորձել են ոսկու փոխարեն հասարակ մետաղից ոսկեգույն թևնոց գրավադրել, դրա դիմաց ստանալ վարկ և հափշտակել զգալի չափերի՝ 216.000 ՀՀ դրամ գումար, սակայն իրենց հանցավոր մտադրությունը իրենց կամքից անկախ հանգամանքներում չեն կարողացել ավարտին հասցնել:

Փաստի առթիվ Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում 2015թ.-ի մայիսի 04-ին ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 14127015քրեական գործը:

30.04.2015թ.-ին ոստիկանության Արաբկիրի բաժին է ստացվել «Հայբիզնեսբանկ» ՓԲ ընկերության գրությունն այն մասին, որ 16.03.2015թ.-ին Երևան քաղաքի Եղբայրության փողոցի 14 շենքի 10 հասցեում հաշվառված Տիգրան Աշոտի Հարությունյանը «Հայբիզնեսբանկ» ՓԲ ընկերության «Կոմիտաս» մասնաճյուղում գրավադրել է 47,5 գրամ ընդհանուր քաշով ոսկի, որի դիմաց ստացել է վարկ: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Տիգրան Հարությունյանի ներկայացրած ոսկին պարունակում է շուրջ 20 գրամ ոսկի և այլ մետաղներ, ինչի արդյունքում բանկին պատճառվել է նյութական վնաս:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ Տիգրան Աշոտի Հարությունյանը խարդախություն կատարելու դիտավորությամբ 2015թ.-ի մարտի 16-ին «Հայբիզնեսբանկ» ՓԲ ընկերության «Կոմիտաս» մասնաճյուղ է ներկայացրել 47,5 գրամ քաշով 20 գրամ ոսկուց և այլ մետաղներից ձուլված շղթա և խաբեությամբ հայտարարել, որ այն ոսկուց է, բանկի հետ կնքել է թիվ Y-15-016534 կրեդիտավորման և ոսկյա իրերի գրավի խառը պայմանագիր, որի դիմաց ստացել է 612.000 ՀՀ դրամ:

Փաստի առթիվ Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում 2015թ.-ի մայիսի 14-ին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 14128615քրեական գործը:

15.05.2015թ. 14128615 և 14127015 քրեական գործերը միացվել են մեկ վարույթում և շարունակվել է նախաքննությունը 14127015 համարի տակ:

01.10.2015թ. թիվ 14127015 քրեական գործով Տիգրան Աշոտի Հարությունյանին ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական գրենսգրքի 34-178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և ՀՀ քրեական գրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրությունը չհեռանալու մասին և հայտարարվել է հետախուզում:

01.10.2015թ. թիվ 14127015 քրեական գործով Մարինե Գեղամի Մկրտչյանին ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական գրենսգրքի 34-178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրությունը չհեռանալու մասին և հայտարարվել է հետախուզում, 07.10.2015թ. Մ.Մկրտչյանը հայտնաբերվել է և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական գրենսգրքի 34-178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

30.11.2015թ. քրեական գործը ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչություն՝ նախաքննությունը շարունակելու նպատակով: 01.12.2015թ. քրեական գործը ընդունվել է վարույթ:

03.12.2015թ. որոշում է կայացվել թիվ 14127015 և 11132415 քրեական գործերը մեկ վարույթում միացնելու և նախաքննությունը 11132415 համարի տակ շարունակելու մասին:

2015թ. մարտի 10-ին Երևան քաղաքի Դավթաշեն 1-ին թաղամասի 51-րդ շենքի 8-րդ բնակարանի բնակիչ ժիրայր Ռաֆիկի Ահարոնյանը ոստիկանության Մաշտոցի բաժնում հաղորդում է տվել, որ 2015թ. մարտի 9-ին ժամը 18:00-ի սահմաններում Տիգրան Աշոտի Հարությունյանը չարաշահելով իր վստահությունը իրեն պատկանող Երևան քաղաքի Բաշինջաղյան փողոցի 173/27-րդ հասցեում գտնվող գրավատանը գրավադրել է ոսկյա շղթա և վերցրել 600.000 ՀՀ դրամ գումար, սակայն հետագայում պարզվել է, որ գրավադրված զարդը ոսկեջրած էժանագին մետաղից է, որի հետևանքով Ժ.Ահարոնյանին պատճառվել է 600.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

Դեպքի առթիվ 17.03.2015թ. Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 10113915 քրեական գործը:

27.11.2015թ. Տիգրան Աշոտի Հարությունյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով, այն բանի համար, որ նա ուրիշի գույքը խարդախությամբ հափշտակելու դիտավորությամբ, 2015 թվականի մարտի 9-ին Երևան քաղաքի Բաշինջաղյան փողոցի 173/27- րդ հասցեում գտնվող ժիրայր Ռաֆիկի Ահարոնյանին պատկանող գրավատանը 127.000 ՀՀ դրամ արժողությամբ, 916 հարգի արծաթյա վզնոցը պատված 750 հարգի ոսկու շերտով, գրավադրելով որպես 750 հարգի ոսկյա վզնոց ստացել է 600.000 ՀՀ դրամ և խարդախությամբ տիրացել գումարին վերոհիշյալ գրավատանը պատճառելով զգալի չափերի ընդհանուր 473.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

01.12.2015թ. քրեական գործը ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչություն՝ նախաքննությունը շարունակելու նպատակով: Նույն օրը քրեական գործն ընդունվել է վարույթ:

03.12.2015թ. թիվ 10113915 և 11132415 քրեական գործերը միացվել են մեկ վարույթում և նախաքննությունը շարունակվել է 11132415 համարի տակ:

15.01.2016թ. որոշում է կայացվել Տիգրան Աշոտի Հարությունյանին ներգրավվել որպես մեղադրյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178-

րդ հոդվածի 2-րդ մասի 2-ին կետով, 34-178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 178-րդ հոդվածի 1-ին մասով :

Նույն օրը մեղադրյալ Տիգրան Հրությունյանի նկատմամբ ստորագրությունը չհեռանալու մասին ընտրված խափանման միջոցը փոփխվել է և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալնվորումը:

30.03.2015թ. որոշում է կայացվել Մարինե Մկրտչյանի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցնելու և ընտրված խափանման միջոցը վերացնելու 'նոր ապացույցներ ձեռք բերելու հնարավորությունները սպառված լինելու և մեղադրյալի մասնակցությունը դեպքին ապացուցված չլինելու հիմքով:

01.04.2016թ. Տիգրան Աշոտի Հրությունյանի մեղադրանքը փոփոխվել է և վերջինս ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 34-178-րդ հոդվածի 1-ին մասով, 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 178-րդ հոդվածի 1-ին մասով:
Հանձնարարություններ են տրվել հետաքննության մարմնին Տիգրան Հրությունյանին հայտնաբերելու և վարույթն իրկանացնող մարմին ներկայցնելու ուղղությամբ, սակայն հանձնարարությունները դրական արդյունք չեն տվել:

2016թ. ապրիլի 4-ին թիվ 11132415 քրեական գործի վարույթը կասեցվել է ՀՀ քրեական դատավարության 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով:

Նախաքննության ընթացքում Երևան քաղաքի դատախազությունից ստացվել է գրություն, համաձայն որի ՌԴ-ում Տ.Հարությունյանի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու համար անհրաժեշտ է թիվ 11132415 քրեական գործի նյութերը թարգմանել ռուսերեն լեզվով:

16.02.2017թ. թիվ 11132415 քրեական գործով կասեցված վարույթը վերսկսվել է:

Նկատի ունենալով, որ քրեական անհրաժեշտ է քրեական գործի նյութերն հայերենից թարգմանել ռուսերեն լեզվով, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով

ՈՐՈՇԵՑԻ՝

Վարույթումս քննվող թիվ 11132415 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել <<Ֆինլոու>> ՍՊԸ թարգմանիչ Վարդուհի Շահինյանին, նրան պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իրավունքները և պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին

ՀԿԳ քննիչ՝ Ա.Զ.Աբրահամյան

Ծանոթացա որոշման հետ, իմ իրավունքները
և պարտականությունները ինձ
պարզաբանված են թարգմանիչ՝ Վ.Շահինյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ԹԱՐԳՄԱՆՉԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՑԱՏՐԵՅՈՒ ՄԱՍԻՆ

<< 16>> փետրվարի 2017թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ՀԿԳ քննիչ՝ Ա.Զ.Աբրահամյանս ղեկավարվելով ՀՀ քր. դատ.օր-ի 83 հոդվածով, կազմեցի սույն արձանագրությունն այն մասին,, որ թիվ 11132415 քրեական գործով թարգմանիչ Վարդուհի Շահինյանին բացատրեցի ՀՀ քր. դատ. օր-ի 83 հոդվածով սահմանված նրա իրավունքները և պարտականությունները:

ԹԱՐԳՄԱՆԻՉԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ.

1. Թարգմանությունը ճշգրտելու համար հարցեր տալ թարգմանության ընթացքում ներկա գտնվող անձանց,
2. Ծանոթանալ իր մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողությունների արձանագրություններին,ինչպես նաև համապատասխան մասով՝ դատական նիստի արձանագրությանը և թարգմանության գրառումների լրիվության և ճշտության հետ կապված դիտողություններ անել, որոնք մտցվում են արձանագրության մեջ,
3. Ստանալ քրեական գործով վարույթի ընթացքում կրած ծախսերի հատուցում,

ԹԱՐԳՄԱՆԻՉԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է.

1. Թարգմանություն կատարելու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով,
2. Քրեական վարույթն իրականացնող մարմնի, ինչպես նաև կողմերի պահանջով դատական նիստի ընթացքում տեղեկություններ հայտնել իր մասնագիտական փորձի և համապատասխան քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հետ հարաբերությունների մասին,
3. Թարգմանությունն ապահովելու համար անհրաժեշտ ամբողջ ժամանակահատվածում գտնվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման վայրում, դատական նիստերի դահլիճում և չլքել նշված գործողության կատարման վայրն առանց այն կատարող անձանց թույլտվության, իսկ դատական նիստերի դահլիճն՝ առանց նախագահողի թույլտվության,
4. Թարգմանել լրիվ, ճշտորեն և ժամանակին,
5. Ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին,
6. Դատական նիստի ընթացքում պահպանել կարգուկանոն,
7. Ստորագրությամբ հաստատել իր մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրությունում թարգմանության գրառումների լրիվությունը և ճշտությունը, ինչպես նաև քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը,
8. Առանց քրեական վարույթն իրականացնող մարմնի թույլտվության չհրապարակել իր մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության ժամանակ, ինչպես նաև դռնփակ դատական նիստում իրեն հայտնի դարձած տեղեկությունները:

Թարգմանչի կողմից իր պարտականությունները չկատարելն առաջ է բերում օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Թարգմանիչն ունի նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ իրավունքներ և պարտականություններ:

Թարգմանիչ Վարդուհի Շահինյանն նախազգուշացվել է ՀՀ քր. օր-ի 338 հոդվածով նախատեսված՝ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար քրեական պատասխանատվության մասին:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԵՆԸ ՍՏԱՑԱ Վ.Շահինյան

ՀԿԳ քննիչ՝ Ա.Զ.Աբրահամյան

16.08.2017թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Ես՝ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ՀԿԳ քննիչ, արդարադատության կապիտան Ա.Զ.Աբրահամյանս, վարույթումս քննվող 11132415 քրեական գործով կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ «ՖԻՆԼՈՌԻ» ՍՊԸ-ի տնօրեն, թարգմանիչ Վարդուհի Ավետիսի Շահինյանը որպես թարգմանիչ է ներգրավվել 16.02.2017 թվականին և սույն քրեական գործի շրջանակներում կատարել է ռուսերենից հայերեն 4.058.018 նիշից բաղկացած գրավոր թարգմանություն:

ՀԿԳ քննիչ՝ **Ա.Զ.Աբրահամյան**

Տեղեկանք

Թիվ 11132415 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավված Վարդուհի Շահինյանը կատարել է 4.058.018 նիշ ռուսերեն լեզվի գրավոր թարգմանության աշխատանքներ:

Երևան քաղաքի ՔՎ ՀԿԳ քննիչ Ա.Աբրահամյան